

ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԳԻՈՆԻՍՏԻՈՍ ԱՐԵՈՊԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ

Նարեկա վանքն ամենանշանավորն էր *X* դ. կառուցված վանական համալիրներից: Այստեղ դարի 40-ական թվականներին վանքի առաջնորդ Անանիա Նարեկացին հիմնադրեց Նարեկյան դպրոցը:

Նարեկյան դպրոցն իր հիմքում ունի մի գրական ընտանիքի պատմություն, որի ներկայացուցիչներն էին Խոսրով Անձեացին, Անանիա Նարեկացին, Գրիգոր Նարեկացին իր Սահակ և Հովհաննես եղբայրներով: Խոսրով Անձեացին Գրիգոր Նարեկացու հայրն էր, Անանիան՝ մոր հորեղբոր որդին:

Ըստ Ուխտանես և Ասողիկ պատմիչների, դպրոցն ուներ հարյուրավոր աստվածաբաններ, երաժշտագետներ և գրականագետներ («գրական գիտողներ», Ասողիկ):

Վերջին շրջանի բնագրագիտական հետազոտությունները զգալիորեն ընդլայնում են այս դպրոցի պահպանված գրական ժառանգության պատկերը, որն ընդգրկված է «Մատենագիրք հայոց» հիմնարար մատենաշարի 3 հատորներում: Իրանց շնորհիվ ի հայտ են եկել մեծածախի նոր բնագրեր, մեծարժեք երկեր, որոնք ներքին գաղափարական-ոճական շերտերով փոխներթափանցված են, ներհյուսված են իրար՝ իբրև դպրոցին յուրահատուկ համաբնագիր:

Հենց այս նորագյուտ բնագրերի՝ հիմնականում Անանիա Նարեկացու երկերի քննությունը պարզորոշ դարձավ, որ Նարեկա վանական համալիրում ստեղծվել է հայ միջնադարի խոշորագույն դպրոցներից մեկը, որ նախատիպ է հանդիսացել հետագա հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների և համալսարանների համար¹:

Նորահայտ երկերը հնարավորություն են տալիս պարբերացնել դպրոցի ձևավորման և զարգացման ընթացքի պատմությունը:

Նման խորապատկերում մեծապես աճում են դպրոցի գրական ժառանգության ուսումնասիրման հնարավորությունները. յուրաքանչյուր նոր բնագրային աղբյուր ու խորքային վերլուծություն շարժման մեջ է դնում, ի հայտ է բերում նոր իմաստային ոլորտներ, բառաշխարհներ, ներքին հղացքներ ու ճշուղավորումներ:

Դպրոցի գրական ժառանգությունը հառնում է իբրև միեղեն կառույց, որն անընդհատ ներքին շարժման մեջ է:

¹ Այս մասին տե՛ս Հ. Թամրազյան, *Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը*, Եր., ԳԱ հրատ., 1986:

Այս երկերի նմանատիպ լուսաբանությունն աննախադեպ մեծացնում է նա-
րեկացիագիտության տեսադաշտը, դպրոցի ներքին աղերսներից զատ կամուրջ
կապելով անցյալի հոգևոր ժառանգության և հետագա դարաշրջանների հոգևոր
դպրոցների և զորեղ գրական ընթացքների միջև, որի կարևորագույն օղակնե-
րից մեկը նարեկյան դպրոցն է:

Շեշտենք մի հանգամանք:

Այս բնագրագիտական հետազոտությունները տեսանելի են դարձնում
նարեկյան դպրոցի պատմության ընթացքը: Դրանք վերստեղծում են բնագրե-
րի ծագումնաբանության, ժառանգական կապերի, փոխներթափանցման ու
փոխազդեցության, դրանց գոյավորման կենդանի ընթացքի պատկերը:

Մեր խնդիրն է եղել առաջին հերթին բացահայտել այդ ստեղծաբանական
կենդանի ընթացքը, քանի որ այդ բնագրերը հաճախ շատ ավելի խոսուն են,
հարաշարժ ու վերձանելի այս փոխառնչությունների, ասոցիատիվ կապերի ու
հարասությունների ոլորտում, քան առանձին մեկնաբանությունների ընթաց-
քում: Սրանցով ի հայտ է գալիս, եթե կարելի է ասել, բուն բնագրերի կենսա-
գրությունը, որոնք ստեղծագործող անհատի ինքնարարման ընթացքի արտա-
հայտություններն են:

Արդյունքում վերստեղծվում է մի համաբնագիր, որ նոր խորք, ծավալ ու
տարածականություն է հաղորդում յուրաքանչյուր ստեղծագործությանը՝ մե-
ծացնելով նրա իմաստային-խոհական դաշտը, ընդգծելով համընդհանուր կա-
ռույցի ճարտարապետությունը:

Այս համաբնագիրն իր ճյուղավորումներով ու ծավալումներով վկայում է
ստեղծագործական հզոր պաթոսի, արարման մեծ տարերքի մասին, որ հա-
տուկ էր նարեկյան դպրոցին: Այն վիթխարի ազդեցություն է թողել հայ մատե-
նագրության, գիտության ու մշակույթի վրա՝ ընդհուպ մինչև նոր և նորագույն
շրջանները՝ կանխորոշելով նրանց զարգացման զորեղ ընթացքները:

Դպրոցն իր գրական ժառանգությամբ գերակշիռ տեղ է զբաղեցնում X դ.
հայ մատենագրության մեջ: Այն արևելաքրիստոնեական միստիկայի զորեղ և
ինքնատիպ դրսևորումներից է, որում գերագույն տեղ է հատկացվում հոգևոր
արվեստների տեսությանն ու ստեղծագործական փորձին: Սրանց հիմքում նաև
հայրաբանական գրականությունն է և նորալատոնական փիլիսոփայությունը:

Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները դիտարկում են ստեղծաբանու-
թյունն՝ իբրև ներքին մարդու ինքնակատարելագործման ընթացք, ներքին կեն-
սագրություն, հոգևոր ուղի, որի վերջնանպատակն է նմանվել Աստծուն՝ քստ
մարդկային կարողությունների:

Ամեն մի առանձին բնագիր, ստեղծագործություն՝ անկախ ժանրից, ձևը
է բերում ուղենշային, բացառիկ արժեք մարդու աստվածացման ճանապար-
հին, արտաքին կենսագրությունը դառնում է ներքին կենսագրություն՝ ներառ-
վելով ստեղծաբանական ընթացքներում, ընդգրկվելով հոգևոր վերառաքման

շղթայի մեջ: Անգամ պատմական միջավայրը, իրադարձային էտնախորքերը՝ թափանցելով հոգևոր այդ ընթացքի մեջ՝ դառնում են ներքին կենսագրության փաստեր և իբրև այդպիսիք՝ վերարթնացնելով ու բորբոքելով ներքին մարդու հուզական շերտերը, «զղջման և արտասուաց» շնորհիվ, վերածվում են պատկերաշարերի, փոխաբերությունների, վերառաքվող խոսքի, բանաստեղծության, որն այս դեպքում դառնում է նրանց գերագույն իմաստը: Ընդգծվում է բանաստեղծողի կերպարը, նրա գործի աստվածային նշանակությունը, նա ստեղծագործում է «ամենարուեստ» Արարչի հետ «համաշնչապէս», իր արարման ձիրքով նա «համացեղ է Աստծուն» (Գրիգոր Նարեկացի):

Նարեկյան դպրոցի գլխավոր արգասիքը բանաստեղծական արվեստի նորարարական տեսությունն է և դրա աննախադեպ զորեղ արտահայտությունները ստեղծաբանության ոլորտում, առավելապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ:

Դպրոցի հիմնադիր և առաջնորդ Անանիա Նարեկացին իր խրատներում զարգացրել է հոգևոր արվեստների, մասնավորաբար բանաստեղծական արվեստի մի ամբողջական տեսություն՝ առաջ քաշելով և ընդգծելով անհատական սկզբի, անձնական փորձի, արվեստի հուզականության, արտահայտչականության, ընտրականության, պատճառա-հետևանքային կառուցիկության սկզբունքները: Իր տեսությունը նա կոչում է ընտրության արվեստ, զղջման և արտասուվելու շնորհ: Սրանց հիման վրա նա ստեղծում է նաև բանաստեղծական աղոթքի իր նմուշները և մի ամբողջական քնարական բանաստեղծություն՝ «Վասն անցաւոր աշխարհիս», որոնք X դ. բանաստեղծության առաջին նմուշներն են:

Ըստ մեր առաջ քաշած տեսակետի, որոնք հիմնված են ձեռագրական տվյալների վրա, նա իր «Յաղագս զղջման և արտասուաց» խրատը, որում գետեղված է իր նշված տեսությունը, գրել է իր աշակերտի՝ Գրիգոր Նարեկացու խնդրանքով:

Սա լիովին փոխում է մեր պատկերացումները X դ. հայ բանաստեղծության ձևավորման ընթացքի վերաբերյալ:

Անանիա Նարեկացու տեսության և փորձի հիմնական աղբյուրները, հայրաբանական գրականությունից զատ (Գրիգոր Աստվածաբան, Եվագր Պոնտացի, Եփրեմ Ասորի, Նեղոս), Դավիթ Անհաղթն ու Դիոնիսիոս Արեոպագագին են:

Այս ամբողջ փորձը, բնականաբար, Գրիգոր Նարեկացին ներառել է իր ստեղծագործության մեջ, հարստացնելով այն նոր շերտերով, ստեղծաբանական ընթացքը հասցնելով կառուցիկության ու կոթողայնության:

Եվ այս ասպարեզում նա գերագույն դեր է հատկացնում Դիոնիսիոս Արեոպագացու երկերին, որոնց զորեղ ազդեցությունները ակնհայտ են նրա բոլոր ժանրերի գործերում:

Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը խոր ազդեցություն են թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության բոլոր շերտերի վրա: Այս

խնդրին մենք անդրադարձել ենք մեր ուսումնասիրություններում, հատկապես «Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը»² աշխատությունում, բայց ի հայտ են եկել բնագրագիտական և տեսական բնույթի նոր փաստեր, որոնց հարկ է անդրադառնալ:

Դիոնիսիոս Արեոպագագու անունով հայտնի երկերն ընդունված է համարել V-VI դարերի հեղինակի գործեր:

Դիոնիսիոս Արեոպագացին Պողոս առաքյալի աշակերտն էր և Աթենքի առաջին եպիսկոպոսը: Նրան վերագրվող այս երկերն առաջին անգամ հիշատակվում են 532 թ., Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում, ուր միաբնակները երկաբնակների հետ վիճաբանելիս, իբրև մեծ հեղինակության, հենվում են Դիոնիսիոսի երկերի վրա: Սկսած այդ թվականից՝ հեղինակի իսկությունը կասկած է հարուցել, և այդ վեճերը, հաճախ անպտուղ, շարունակվում են առ այսօր:

Ժամանակակից ուսումնասիրողներից ոմանք, շեշտադրելով այս խորհրդավոր երկերի բուն էությունն ու նշանակությունը, դիտարկում են դրանք իբրև միեղեն մարդ — ստեղծագործություն, որի խորհրդավոր հեղինակը ներհյուսվել է սրբազան բնագրերի հետ:

Խորհրդավոր այդ բնագրերում քրիստոնեական աստվածաբանությունը ներհյուսված է նորալատոնական փիլիսոփայության հետ: Դիոնիսիոս Արեոպագացին ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից է՝ հայրաբանության վերջին շրջանի ներկայացուցիչներից:

Նա նաև արևելաքրիստոնեական միստիկայի փիլիսոփայական-հայեցողական դպրոցի հիմնադիրն է համարվում, թեև նրա երկերն ընդգծված գեղագիտական բնույթ ունեն:

Հայ իրականության մեջ Դիոնիսիոսը համարվում էր եկեղեցու 12 գերագույն հեղինակություններից մեկը և, իբրև միաբնակության հետևորդ, օգտագործվում էր երկաբնակության դեմ դավանաբանական պայքարում: Նրանից բազմաթիվ քաղվածքներ կան «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում:

Այս երկերը վիթխարի ազդեցություն են թողել Միջնադարի և Վերածննդի գեղագիտական մտքի և մշակույթի զարգացման ընթացքի վրա: Հայ մշակույթի վրա այդ զորեղ ազդեցությունը նկատելի է սկսած VIII դարից՝ դրանց թարգմանությունից անմիջապես հետո: Ինչպես հայտնի է, այս երկերը 718 թ. թարգմանել է Ստեփանոս Սյունեցին՝ V-VI դդ. հայ հունաբան դպրոցի ավանդների շարունակողը: Դիոնիսիոսի ազդեցությունն արդեն իսկ նկատելի է նրա երկերի վրա:

Այս երկերն իրենց կարևոր տեղն ունեն հայ ձեռագրական ավանդույթի մեջ: Դրանք այն եզակի բնագրերից են, որ մեզ են հասել հարյուրից ավելի ձե-

² Երևան, Նաիրի, 2004:

ռազրով (հիսունից ավելի օրինակ պահվում է միայն Մաշտոցի անվան Մատենադարանում):

Դիոնիսիոս Արեոպագագու ազդեցությունն ականառու է Նարեկյան դպրոցի բոլոր ներկայացուցիչների վրա: Ինչպես պարզվում է Անանիա Մոկացու թղթերից, նրա վրա էր հիմնվում Խոսրով Անձևացին՝ եկեղեցական-բարենորոգչական իր ծրագրերում³: Ինչպես նշեցինք, Դիոնիսիոսի ազդեցությունն ականառու է Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության և ստեղծագործական փորձի վրա, որից էլ այն անցել է Գրիգոր Նարեկացուն⁴:

Նրա դավանաբանական հայացքները մեծապես օգտագործվել են նաև X դ. հայ դավանաբանության մեջ: Դրանցից քաղվածքներ են գետեղված Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկում, ուր Անանիա Նարեկացին նրան կոչում է «Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացի՝ աթէնական փիլիսոփայ եւ գերականտար ճարտասան»⁵: Այս բնորոշումը հույժ հետաքրքրական է, քանի որ ականարկ է հեղինակի ճարտասանական ոճի, նրա փիլիսոփայական երկերի գեղագիտական-գեղարվեստական ուղղվածության մասին, որին մենք կանդրադառնանք:

Վերջին շրջանում բնագրագիտական հետազոտությունների շնորհիվ Գրիգոր Նարեկացու մատենագրական ժառանգության պատկերն առավել ամբողջացավ՝ ներառելով մի քանի մեծարժեք աստվածաբանական-դավանաբանական, մեկնողական-խրատական բնույթի երկեր, որոնցից մենք հիմնականում կանգ կառնենք «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ» երկի վրա, որը տրամախոսական-իմաստասիրական խորք ունի և համալրում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերը՝ նոր լույս սփռելով նրա մի շարք կողմերի վրա:

Առավելապես այս երկում են ի հայտ գալիս Դիոնիսիոս Արեոպագագու զորեղ ազդեցությունները Գրիգոր Նարեկացու աստվածաբանական-բանաստեղծական համակարգի վրա:

Դիոնիսիոսն իր երկերում զարգացնում է աղոթքի և օրհնաբանությունների մի ամբողջական տեսություն: Դրանց շարքում են աղոթասացական աստվածաբանությունն իր երկու՝ ճառելի և անճառելի ուղղություններով, նշանական աստվածաբանությունը (պատկերի տեսությունը), էքստատիկ («տարփական») աստվածաբանությունը, խորհրդական աստվածաբանությունն՝ իրենց գոյաբանական, տիեզերագիտական, գեղագիտական շերտերով, որոնք ներթա-

³ Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, եր., 2011, էջ 288-291 (այսուհետ՝ Մատենագիրք հայոց):

⁴ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը, էջ 293-295, նույնի՝ Գրիգոր Նարեկացին և նորավատոնականությունը, էջ 12, 19, 21-30, 31-34 և այլն:

⁵ Մատենագիրք հայոց, Ժ հատոր, էջ 571:

փանցել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության խորին շերտերը: Եվ վերջապես, դրանք բոլորն ամբողջանում են օրհնաբանական աստվածաբանության մեջ, քանի որ Դիոնիսիոսն օրհնաբանությունն ու աստվածաբանությունը նույնացնում է երկրային ու երկնային քահանայապետության հիերարխիկ շղթայի մեջ, որը ներառում է Դիոնիսիոսի գոյաբանական և տիեզերաբանական տեսությունները:

Ա. Աղոթքի և օրհնաբանության տեսությունը Դիոնիսիոս Արեոպագացու աստվածաբանական համակարգում

Դիոնիսիոս Արեոպագացու տեսական համակարգում հատուկ տեղ է գրավում աղոթքի տեսությունը, որ նա համարում է անմիջնորդ, անմիջական աստվածահայեցողություն:

Աղոթքի տեսությունն իր հիմքում ունի երկնային և երկրային քահանայապետությունների, իմանալի և զգալի աշխարհների գոյաբանական կապի գաղափարը, ըստ որի այդ երկու աշխարհները գոյացել և գոյում են Աստծո նախախնամությամբ և գոյակցված, էակցված են իրար: Զգալի, զգայական, երևելի աշխարհների միջոցով՝ նրա նշաններով հնարավոր է դատել իմանալի, բանական, աներևույթ աշխարհների մասին:

Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս աստուածալնոցն անուանց»⁶ երկի III գլուխը նվիրված է աղոթքի՝ իբրև աստվածաբանության անհրաժեշտ, կարևորագույն մասի քննությանը: Այն խորագրված է «Զի՞նչ է աղալթից զաւրութին, եւ յաղագս երանելոյն Յեռոթէոսի, եւ յաղագս երկիւղածութեան եւ շարագրութեան աստուածաբանականի»⁷:

Այս գործն աղոթքի տեսություն է, որ կապվում է ավելի հոգեզգայական էքստազի, քան բանական հայեցողության հետ:

Զգայական աշխարհից վերառաքումը զուգորդվում է առաջին հերթին «սրբազան տուփման» (էքստազի), «աստվածային սիրո» զգացմունքի, հուզազեղման հետ, որ գերազույն նպատակ է «խորհրդագգած» անձի, միստիկի համար (Դիոնիսիոսն այն անվանում է «տուփական» (սիրային) աստվածաբանություն):

Անպղտոր, մաքուր մտքով կատարվող «ամենասուրբ» աղոթքի միջոցով միայն կարող է ներանձնացյալը, հայեցողն առավել մերձենալ գերազույն Բարուն՝ Աստծուն և նրա «բարեպետությանը», թափանցել բանական աշխարհը, որին այնուհետ միայն հաջորդում է առավել խաղաղ՝ բանական հայեցողու-

⁶ Տե՛ս The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by R. W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987 (Corpus Scriptorum Christianorum Orientalium 448), (այսուհետ՝ Դիոնիսիոս), էջ 128-224:

⁷ Նույն տեղում, էջ 149-153:

թյունը, երբ հայեցողը «ուսանում է, սերտում է» աստվածային պատգամները՝ նրա շուրջը տարածվող էությունների աշխարհը:

Ըստ Դիոնիսիոսի՝ «առաջին հերթին և միշտ» աստվածաբանությունը աղոթքից է պետք սկսել: Նա աղոթքը համարում է անմիջնորդ աստվածաբանություն, որի միջոցով ձգտելով Աստուծուն, մերձենում և միանում ենք նրան՝ ոչ թե նրան ձգելով դեպի մեզ, այլ բարձրանալով առ նա:

Այդ պատճառով բուն աստվածաբանության սկզբունքները շարադրելուց առաջ նա անդրադառնում է աղոթքին, որի միջոցով, ասես լարի նման երկնային ճառագայթից քաշելով՝ բարձրանում ենք մինչև «բարձրագույն, բազմաճաճանչ ճառագայթների պայծառությունը», աստվածային լուսեղեն բխումների աշխարհը:

«Եւ որպէս... բազմալոյս ինչ լար ի յերկնից ծայրութենէն կախեալ ի վերուստ մինչ ի վայր, եւ բուն հարեալ զնմանէ ձեռն ձեռամբ փոփոխելով քարշել թուելով զնա, ոչ զնա ի մեզ քարշեաք, զի վերուստ կապեալն, այլ մեք եւանեաք առ բարձրագոյնսն բազմաճաճանչ ճառագայթիցն պայծառութիւն:

... Վասն որոյ եւ նախ քան զամենայն եւ լաւէտ քան զաստուածաբանութեանն աղաւթից սկսանել պարտ է...»⁸:

Երկնից կախված «բազմալոյս» այդ լարի պատկերն օգտագործված է Գրիգոր Նարեկացու՝ Հոբի գրքի մի հատվածի («Ո՞վ է Դա») մեկնության մեջ. «Իբրեւ հրեղեն լարս՝ զսուրբ զաղալթս յերկինս առաքեսցուք...»⁹:

Այս հատվածում Գրիգոր Նարեկացին «բացում» է, հոգևոր էքստազի մեջ մեկնում է իր ստեղծագործության նորարարական տարրերը, որին կանգնադառնանք:

Ըստ Դիոնիսիոսի, աստվածային Հոգու այդ ներթափանցումների՝ «հայրաշարժ լուսերևության» շնորհիվ մարդկային հոգիները միավորվում և ձգտում են «աստվածարար պարզության»:

Այս ավանդույթի նորովի արտահայտություններն են Գրիգոր Նարեկացու «լուսազեղուն» տաղերի մի շարք հատվածներ:

«Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի III գլխի շարունակության մեջ Դիոնիսիոսը բացում է իր միստիկ աստվածաբանության սրբազան գաղտնիքներից մեկը:

Ըստ Դիոնիսիոսի, գերագույն ներշնչանքի պահին աղոթքը, օրհնաբանությունն ու աստվածաբանությունը ներշնչվում են, դառնում են միեղեն աստվածահայեցողություն և հասցնում Աստծո հետ հաղորդության, կցորդության,

⁸ Նույն տեղում, էջ 149-150:

⁹ Մատենագիրք հայոց, հատոր ԺԲ, էջ 908:

որը մեծ միստիկներին հասցնում է հափշտակության, հիացման, էքստազի, և որի գերագույն արտահայտություններից են տեսիլքները: Մենք ուղղակի կապ ենք տեսնում Դիոնիսիոսի այս հատվածների և Նարեկացու անձնական տեսիլքների հիշատակությունների միջև, որոնք նրա հոգևոր պայծառացման, աստվածացման պահերն են, և որոնց նա բացառիկ նշանակություն է տալիս՝ իբրև գերբնության դրսևորումներ, ներքին մարդու պայծառացման պահեր:

Սա Դիոնիսիոսի աղոթքի տեսության գերագույն աստիճանն է, նրա միստիկ աստվածաբանության կիզակետը:

Եվ իրոք, հետագա շարադրանքում պարզվում է, որ Հեռոթեոսի՝ այդ աստվածային օրհներգուի «Աստվածաբանության սկզբունքների» հիմնական շերտերից է աղոթքի տեսությունը, որը հանդես է գալիս իբրև օրհնաբանություն կամ օրհնաբանության տեսություն, որին Դիոնիսիոսը բազմիցս և տարբեր ձևակերպումներով անդրադառնում է իր երկերի տարբեր գլուխներում և հատվածներում:

Հեղինակն ամենուրեք օգտագործում է օրհներգության, օրհնաբանության ժանրին հատուկ բառապաշար և ճարտասանական բարձրարվեստ ոճ, որը հատուկ շեշտում է Անանիա Նարեկացին. «Դիոնիսիոս Արիսպագացի՝ աթենական փիլիսոփայ է և գերակատար ճարտասան»: Դիոնիսիոսի երկերի այս յուրահատուկ բառապաշարը մեծապես ազդել է և՛ Անանիա Նարեկացու, և՛ Գրիգոր Նարեկացու վրա: Այդ ազդեցություններն ի հայտ են գալիս հատկապես նրանց ներբողներում:

Գեղագիտական-գեղարվեստական այս շերտը, ճարտասանական այս արվեստն ու յուրահատուկ բառագանձը, որ Դիոնիսիոսի աստվածաբանության էական կողմերից է, խորապես ընկալել, ստեղծագործաբար յուրացրել ու ծավալել է Գրիգոր Նարեկացին:

Աղոթքն ու օրհնաբանությունն իբրև Դիոնիսիոսի երկերի ներքին կառուցվածքային շերտ ու խորհային հղացք

Դիոնիսիոսն իր «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկը հղացել է իբրև օրհնաբանությունների շարք՝ ձոնված Արարչին և նրա արարչագործությանը, մարդուն ու մարդկային հանճարին, օրհնաբանություններ, որոնք ներհյուսված են ամենաբարդ ու խրթին, հաճախ գաղտնածածուկ աստվածաբանական բնագրերին: Դրանք տարփողում են Աստծո արարչագործության հրաշքը, աստվածայինով ներթափանցված ողջ տիեզերքը, որ զեղուն է սիրով և անընդհատ շարժման մեջ է:

Անընդհատ շարժման մեջ են նաև զարմանալի այս բնագրերը, որոնք ներթափանցել են Գրիգոր Նարեկացու երկերի մեջ, և նրանցով միջնորդավորված, «շաղկապված և էակցված» տիեզերական շրջապտույտը դառնում է վերժամանակյա ստեղծաբանություն:

Նման տեսանկյունից դիտարկելով՝ Դիոնիսիոսի երկերում ի հայտ է գալիս ներքին մի կառույց, որ թույլ է տալիս նրա միատիկ տեսությունը, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնական մասերով, ընկալել իբրև համապարփակ աղոթքի տեսություն, քանի որ աղոթքը, օրհնաբանությունը, ըստ էության, նրա աստվածաբանական համակարգի, աստվածաճանաչողության սկիզբն է, միջոցն ու նպատակը: Եվ աղոթքի ժանրի մեջ են ներառվում նաև օրհնաբանությունը, փառատրությունը, խորհրդավոր միատիկ ներսուզումները և մտահայեցումները, որոնք արդյունք են աշխարհն իբրև աստվածային անվերջ հղացման, լուսեղեն արարչագործության ծիր, անվերջ բխում և շրջապտույտ ընկալելու դիոնիսիոսյան գաղափարի, ըստ որի արարման գերագույն ներշնչանքի պահին մարդն էակցվում, միախառնվում է աստվածային ոլորտներին, աստվածանում է՝ ըստ մարդկային կարելիության ու կարողության:

Դիոնիսիոսն աղոթքն ընկալում ու ներկայացնում է իբրև անմիջական աստվածահաղորդության և աստվածահայտնության արվեստ և գիտություն, իբրև յուրատեսակ առաջին աստվածաբանություն, որի միջոցով աղոթողը կամ աստվածաբանողը բարձրանում է երկնային աստիճանակարգերով: Նա շեշտում է աղոթքի նշանակությունը, մշակում նրա տեսությունը: Եվ իր ողջ աստվածաբանական համակարգը նա ներառում է այս շղթայի մեջ՝ իբրև վերառաքման աղոթք, սիրազեղուն, էքստատիկ օրհնաբանություններ և հիմներ, և, իբրև բանական հայեցողության բարձրագույն վիճակներ ու ներսուզումներ՝ կատաֆատիկ (ճառելի, հաստատող) և ապոֆատիկ (անճառելի, ժխտող) փառատրություններ, որոնք, ըստ էության, աղոթքի ձևանմուշներ ու օրինակներ են:

Ճառելի աստվածաբանությանն է նվիրված «Յաղագս աստուածանոցն անուանց», անճառելի՝ «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկը:

Այս շղթային է անմիջականորեն ներհյուսվում Դիոնիսիոսի պատկերի տեսությունը՝ «նշանական աստվածաբանությունը», որի զորեղ ազդեցությունը նույնպես ականառու է Նարեկյան դպրոցի և հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա:

Բոլոր այս օրհնաբանություններն ու փառատրությունները նախօրինակ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության համար: «Մատենան»-ի շատ դրվագներ իրենցից աստվածային գերանունության շարքեր են ներկայացնում:

Խորհրդական աստվածաբանությունը. ապոֆատիկ և կատաֆատիկ օրհնաբանության սկզբունքներ:

Գրիգոր Նարեկացու վրա զորեղ ազդեցություն է թողել հատկապես Դիոնիսիոսի «խորհրդական աստվածաբանությունը», որն իր ողջ փիլիսոփայական-խորհրդապաշտական ծավալումներով և առեղծվածային խորքերով նույնպես ներկայանում է իբրև աղոթքի, օրհնաբանության տեսություն կամ ներածություն:

Այդ մասին են վկայում «Յաղագս խորհրդականի աստվածաբանություն» երկի II ենթագլխի խորագիրն ու բովանդակությունը, ինչպես նաև մնացած բոլոր գլուխները, որոնք բացահայտում են, թե ինչպես պետք է կառուցել աղոթքն ու օրհնաբանությունը և միաժամանակ տրվում են դրա օրինակները:

Իր այս խորհրդավոր երկասիրությունը, իր իսկ սկզբունքի համաձայն, նա սկսում է Սուրբ Երրորդությանն ուղղված սրբազան աղոթքով:

Սուրբ Երրորդությունը ներկայանում է որպես սրբազան խավար, «գերալոյս մէգ», որի անմատուց լույսը՝ «գերալուսությունը» պատված է «թաքնախորհուրդ լուսության միգով», և որին կարելի է հասնել «անաչա իմացությունամբ»:

Աղոթքի ընթացքում ներհնումում են էքստատիկ աստվածաբանության բոլոր աստիճանները, և էքստազը կայանում է գերագույն էության անըմբռնելի ընկալմամբ՝ հիացման, զարմանքի, հափշտակության վիճակում. «Անըմբռնեալ եւ արձակ, եւ մաքուր զարմացմամբն առ գերագոյ ճառագալթն աստվածալնոյն խաւարի համբարձցիս՝ զամենայն թողեալ եւ յամենայն է ի բաց լուծեալ»¹⁰:

Օրհնաբանական աղոթքը, ապոֆատիկ և կատաֆատիկ աստվածաբանությունը Գրիգոր Նարեկացու երկերում

Արեոպագիտյան աստվածաբանության այս վերին մակարդակը՝ խորհրդական աստվածաբանությունը, ինչպես և նախորդ աստիճանները, արտահայտված է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ: Գրիգոր Նարեկացու երկերում ևս հանդիպում է Աստծո՝ իբրև սրբազան խավարի, անմատուց լույսի ըմբռնումը, որի աղբյուրն, անկասկած, Դիոնիսիոսն է:

Ինչպես նշել ենք, իր այս երկում Դիոնիսիոսը տալիս է հաստատող և ժխտող աստվածաբանության (այսինքն՝ օրհնաբանական աղոթքի) նման շարքեր, որ հետագայում ուղեցույց և ընդօրինակման առարկա են դարձել միջնադարյան միստիկ բանաստեղծների համար:

Արեոպագիտյան ապոֆատիկ և կատաֆատիկ աստվածաբանության, օրհնաբանական աղոթքի այս եղանակներն ի հայտ են գալիս առավելապես Գրիգոր Նարեկացու «Մատենում», ուր կան նման ամբողջական շարքեր ու գլուխներ: Նրա բանաստեղծական բնագրերում այս երկու եղանակներն ավելի հաճախ հանդես են գալիս միահյուսված:

Գրիգոր Նարեկացին արդեն իսկ իր սկզբնական շրջանի գործերից մեկում՝ «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում իրար է հյուսում արեոպագիտյան բնագրերում հանդիպող ժխտողական ու հաստատող, դրական աստվածաբանության «գերանունությունները».

¹⁰ Դիոնիսիոս, էջ 224:

«Եւ արդ, այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն: Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ»¹¹:

Ահա մի հատված «Մատեանից».

Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու,
Սոսկալի, հզար, սաստիկ,
Անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի,
Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշաւշափելի,
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,
Անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն,
Ճշմարիտ էականութիւն, բարձր եւ խոնարհ,
Աւրհնաբանելի գոյութիւն, անստուեր ծագումն,
Ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս,
Անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ,
Անյեղի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն,
Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան,
Հաստիչ հոգւոց հաց, աւտար մթութեանց սէր, աներկբայ խոստումն,
Ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ...

(Բան Գ, Ա)

Աստվածաբանական նշված եղանակներն այս հատվածում հանդես են գալիս զուգորդված, համատեղ՝ ծառայելով նույն նպատակին: Նարեկացին հիշատակում է հաստատող՝ կատաֆորիկ «աստվածանունության» կերպը՝ «գրականապէս անուանագրութեամբ»:

«Մատեան»-ի բազմաթիվ գլուխներում և հատվածներում կան գոհաբանական աղոթքի շարքեր, ուր միանում, միահյուսվում են նշանական, տարփողական և խորհրդական աստվածաբանությունները, որոնք Նարեկացին անվանում է «մաղթողական բանաստեղծութիւն, գոհաբանական աղերս, գոհութիւն՝ խառնեալ ընդ աղերս, երգաձայնութիւն» և այլն:

Նման օրհնաբանությունները սոսկ վերացական թվարկումներ չեն, մտահայեցողությանն այստեղ միախառնված է նաև զգացմունքային-հոգեբանական շերտը, որով նրանք ներհյուսվում են ջերմեռանդ աղոթքին՝ վերածվելով աղերս-մաղթանքների, որոնցում նշմարվում է Աստծո հետ անմիջնորդ կապի, այդ միություն կենդանի զգացողության հարակալող տեսիլքը: Եվ այստեղ էական են դառնում այն բնորոշումները, որոնք նշում են այդ կապը. Աստծո

¹¹ Մատենագիրք հայոց, հատոր ԺԲ, էջ 1024:

էական հատկանիշների մեջ շեշտվում են նրա ազդեցություն, ներգործություն, շնորհատվություն, ազդեցիկ հետ անընդհատ կապի, հրաշագործության արարչական գործունեությունները, արվեստի հրաշքները: Աստված համարվում է «համբուրելի խոսք, սքանչելի ազդում» (ԻԼԷ), «Բարձրության պատկեր, բերկրության բարբառ» (ԾԷ, Ա):

Այստեղ դարձյալ նարեկացին խոսում է աստվածային ներշնչանքի, շնորհված խոսքի մասին, որ բանաստեղծի շուրթերի շարժարանն է, նրա ազդեցության մեջ են ձեռքերն առ բարձրյալը բարձրանում:

Աստված ներկայանում է իբրև գերագույն արվեստագետ, ամենարվեստ Արարիչ, որն արարման շնորհով է օժտում նաև բանաստեղծին, մասնակցում նրա ստեղծագործությանը:

Կի՛ց նուագալք այսր մատենի...

Եւ գերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զաւրացո՛ւ:

Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս...

Արուեստդ հրաշից ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի:

(ԿԵ, Բ)

Աստծո բարձրագույն անվանումներին ավելանում են «ամենահնար արվեստագետը, երկնային ճարտարապետը, արծաթագործը» (Բան ԿԹ, Ա), «ամենարվեստը, վարդապետը» (ՀԶ, Բ), «մատենագիրը, որը գրում է բանաստեղծի հոգու ոսկեղեն տախտակի վրա» (ԼԴ, Ժ):

Այսպես, այս թվարկումների ընթացքում, որոնք արթնացնում, սրում են բանաստեղծի միատիկ աստվածագագողությունը, շարունակվում է նաև նրա անմիջնորդ գրույցն Աստծո հետ: Սահմանները ջնջվում են, բանաստեղծի էսք միախառնվում է Աստծուն, Աստված ինքն է, ասես, արարել «Մատեն»-ը, և բանաստեղծը խնդրում է նրան՝ հանուն իր հանդեպ տաժած սիրո, ողբերգության մատչանում հիշել և ներել նաև թշնամիներին:

Դիոնիսիոսի խորհրդավոր բնագրերը սնել են նարեկացու բանաստեղծական աշխարհը՝ զարկ տալով բանաստեղծական անանց երևակայությանը, մտքի թռիչքին:

Խորհրդավոր մտքերի, պատկերների ստեղծագործական զորեղ ներուժն արտահայտված է Գրիգոր Նարեկացու երկերում:

Ավելին, դրանք էական ազդեցություն են թողել նրա պոետիկայի և բառաշխարհի կազմավորման և զարգացման վրա, սնելով նրա բառաստեղծման տարերքը, մղելով նրան անընդհատ նորաբանությունների:

Այդ խորհրդավոր բանաձևումները, բանական աշխարհի վերամարմնավորումներն ու տեսիլքները Գրիգոր Նարեկացու առաջմղիչ գաղափարները, ստեղծագործական սկիզբներն են հանդիսացել: Դրանք նաև բանալիներ են բանաստեղծի խորհրդավոր աշխարհը թափանցելու համար:

Այդ խորհրդավոր բնագրերը, նրանցում արծարծված գաղափարները ծառայում են հեղինակի ստեղծագործական խնդիրներին, երկի բուն նպատակին, ներհանգիստի, իբրև օրհներգություն և փառատրություն, աղոթասացության՝ օրհնաբանական աստվածաբանությանը՝ ըստ Դիոնիսիոսի: Այդօրինակ հատվածներն ու թվարկումները՝ մտային հայեցողությունից, մտավոր վերառաքումից բացի, Նարեկացու բնագրերում ունեն նաև հուզական-զգացմունքային ազդակների գործառույթ. դրանք նախապատրաստում են բանաստեղծին հասնելու հոգևոր վերառաքման վերին օղակին՝ էքստատիկ աստվածաբանությանը, որը ներկայացնում է հոգևոր զգացմունքի բարձրագույն աստիճանը: Պատահական չէ, որ հաճախ այդ աստվածանունության շարքերին հաջորդում են բանաստեղծի ամենախնդիր խոստովանությունները և բանաստեղծական ներքին փորձի բացահայտումները:

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու երկերն ի հայտ են բերում նրա ստեղծագործության խոր աղերսներն արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության բոլոր շերտերի հետ, որոնք լիակատար արտահայտություն են գտել նրա բանաստեղծության ծիրում: Այդ աստվածաբանության ստեղծագործաբար յուրացումը սկսվել էր արդեն հոսսրով Անձեազուց, յուրովի զարգացում ապրել Անանիա Նարեկացու գործերում ու բանաստեղծություններում, սակայն առավել ամբողջական, համապարփակ կիրառվել է Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ում ու տաղերգության մեջ:

«Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ»

Դիոնիսիոս Արեոպագացու տեսական համակարգի զորեղ ազդեցությունը նկատելի է հատկապես «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկի վրա, որի բնաբանն է «Հայեա՛ց յանձն քո...»: Այն սկսվում է «մեծն Դիոնիսիոսից» մի ընդարձակ քաղվածքով, որ նրա ողջ փիլիսոփայական-գոյաբանական համակարգի մի խտացված բանաձևումն է: Գրիգոր Նարեկացին այդ համակարգը ներառում է գոհաբանական, օրհնաբանական աղոթքի մեջ: Իր ճառի մի այլ հատվածում, որն ուղղակի առնչվում է վերոնշյալի հետ, նա խոստովանում է, որ Սուրբ Հոգուց շնորհ, լեզու է ստացել՝ բարբառելու աստվածային բոլոր գոյերի, տարերքների և ողջ մարդկության փոխարեն: Սա բխում է Դիոնիսիոսի նշված ուսմունքից, ըստ որի աստվածային ողջ նվիրապետությունը, ողջ տիեզերքը՝ աստվածային էակներից մինչև բնության ամենաչնչին արարածները՝ ներթափանցված են աստվածայինով:

Զուգադրենք «Ճառի» նշված երկու հատվածները.

«Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա եւ անմեկնելի եւ անորոշելի եւ յարարելոցն յիւրմէ՝ լուսաշարժ եւ քաքեբուղիս ստեղծելոցն յառաջնոցն մինչեւ ի հուսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք եւ անշարժք. ըստ մեծին Դիոնիսեայ Արիսպագացոյ՝ յոր

հայելուք ի խաւսնոց մտաւորաց՝ ոչ է արժան լուսահատութեամբ զինքն արտա-
քոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ...:

Յաղագս որովք ընդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով եւ ի
ստիքս¹² կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանխոյ, տալով
բնաւիցն խաւսուն լեզուս՝ եւ ամենեքումբ գոհանամբ զնմանէ, որ ետ ինձ ի վա-
լեւս զայս ամենայն ...՝ առնուլ զաղաւթս եւ զաւրհնութիւն աղեկիզեալ սիրալի,
եւ աստուածագութ խնամոցն... եւ ջեռուցեանել զջերմ եւ զեռանդնոտ սիրտս
ձեր՝ բորբոքել սիրով, զոր պարտին արարածք՝ Արարչին...»¹³:

Բանական մարդն անմասն չէ այդ աստվածային, տիեզերական արարչա-
գործությունից՝ աստվածային էություններից մինչև հետին արարածները, և
դեպի այն պետք է ուղղվի նրա հայեցողությունը, և այդ հայեցողության, աստ-
վածատուր ձիրքի, խոսքի շնորհիվ բանաստեղծն աղոթում և օրհնաբանում է
Աստծո խնամակալության տակ գտնվող բոլոր գոյերի, բնության տարերքների,
արարածների և համայն մարդկության փոխարեն, որոնք Աստծո «լուսաշարժ և
բարեբուլիս» ստեղծագործության արդյունք են:

Վերոնշյալ հատվածների հիմքում Դիոնիսիոսի հիերախիկ տեսությունն է,
որը էական է նրա գոյաբանական համակարգում. ըստ դրա՝ աշխարհում ամեն
ինչ կապված է Առաջնամիակի՝ Աստծո հետ, նրա ստեղծագործությունն է և
լուսեղեն բխման արդյունք լինելով՝ գտնվում է հավերժական շրջապատյտի
մեջ՝ հրեշտակներից մինչև ամենահետին արարածները: Այս տեսությունն իր
գեղարվեստական մարմնավորումն է գտել հատկապես Գրիգոր Նարեկացու
տաղերում: Այս առումով Գրիգոր Նարեկացին մեծ նորարար է, քանի որ ոչ մի-
այն ստեղծագործաբար յուրացրել, այլև կիրառել է այդ տեսությունն իր ստեղ-
ծագործական հղացքների մեջ՝ իբրև միատիկ բանաստեղծ հասնելով զարմա-
նալի խորքերի ու ներթափանցումների:

Ինչպես տեսնում ենք, «Ճառում» ևս աստվածաբանությունը, փառատրու-
թյունն ու օրհնաբանությունը շաղկապված են իրար իբրև միեղեն հորինվածք
և բնագիր: Սրա վառ արտահայտությունները երևան են գալիս Գրիգոր Նարե-
կացու տաղերում, «Ճառ Լուսոյ խաչի» ներբողում, Հոբի գրքի «Ո՛վ է Դա»
հատվածի բանաստեղծական մեկնություններում:

Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքն, ըստ էության, ներշնչված
է Դիոնիսիոսի «զարմանահրաշ» ներթափանցումներով և հիերախիկ տեսու-
թյամբ:

«Ճառ լուսոյ խաչի»

Վերոնշյալ «Ճառում» արժարժված գաղափարներն իրենց գեղարվեստա-

¹² Ստիք բառը, ի թիվս այլ իմաստների, բնության տարր և տարերք է նշանակում (տե՛ս նոր
բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, էջ 746):

¹³ Մատենագիրք հայոց, հատոր Ժ, էջ 1040, 1042:

կան մարմնավորումն են գտել նաև Նարեկացու «Ճառ լուսոյ խաչի» ներբողում, որի նախադրություն մեջ Գրիգոր Նարեկացին մեկնաբանում է Նսայու մարգարեության մի հատվածը. «Ձերկին ավոռ իմ և զերկիր պատուանդան ուտից իմոց» (Նս. ԿԶ. 1), փորձելով բացահայտել պատկերի «երկկերպեան» իմաստը. այն է՝ ինչպես են մարդու մեջ միացել «հոգազանգուած միեղենությունն» ու «անյաւգական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն», այսինքն՝ աստվածային էությունը:

«Վասն զի հրաշագնին զարութիւն ընդգրկեալ ի կայս կրաւորական երկկերպեան պատկերի իւրոյ բանիս տեսութիւն, եւ որպէս մարմնոց շարընթացելոց ի յոքունց նիւթոց ի միեղինութիւն հոգազանգուած մասանց մսեղեաց զանունակն քանակութեան շափաբերական բարբառով կշռեաց: Իսկ անյաւգական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն զիա՞րդ ըստ այսմ նմանութիւն մասին ձեւացի»¹⁴:

Աստվածային գերալիր էությունը խառնված է, հոգակցված է զգայական աշխարհին, գոյության ստորին աստիճաններին (իր տաղերում Նարեկացին օգտագործում է այս առումով «էակցեալ» եզրաբառը):

«Ապա խոստովանեալ՝ միշտ հաւատացի յաւարտումն գերալրութեան էություն նորա, եւս եւ ի ստորինս կոյս ծանուցեալ յաւգատեսակ խառնութիւն նորին»¹⁵:

Աստվածայինով ներթափանցված կյանքի այս գաղափարն է, ահա, Գրիգոր Նարեկացու ներբողի և օրհնաբանությունների հիմքում:

Ողջ բնությունը, անտառն ու բույսերն Արարչի հայտնությունից, նրա «կենսաբեր գալուստից» («հոգեպէս» ցնծում են և հրճվում, անձայն բարբառով, անխոս շուրթերով տարփողելով նրան («բազմադրուատ ձայնիւ նուագեն»): Եվ բանական մարդն է՝ էի պատկերն ու օրինակը, «երանությունը» գլխավորում այդ համատիեզերական «բխող երգաբանությունը», Արարչին եւ իր արարչագործությունը: Ինչպես տեսնում ենք, ամեն ինչ դարձյալ հանգում է աղոթքին, օրհնաբանությանը, երգաբանությանը:

«Եւ ըստ այլասեռն զարմի՜ ծառք բուսոյ բնաւին անտառաց համայն հրճուանաւք խրախուսեալ ցնծան հոգեպէս՝ զյայտնութիւն երեւման Հաստչին ծանուցեալ (տե՛ս Սաղմ. Դէ. 12-13):

Եւ արդ, եթէ այսոքիկ ստեղծուածք փոքունք մեծն արարչութեան վայելչական եւ բերկրապարն լրութեամբ զՏնկաւղին եւ զՀաստաւղին կենսաբեր գալուստն ի բարբառ անձայն անբան բերանոյ, եւ ի ձեռս անյայտս անտիպ տեսակի, եւ յոտս անբերողս բնութեանն բարձից բազմադրուատ ձայնիւ նուագեն, քանզի թէ գիրն ստուերասանն պատճառ փառաց Անեղին պատուի, իսկ խաչին

¹⁴ Տե՛ս Մատենագիրք հայոց, հատոր ԺԲ, «Ձմեռքողենիս հառ լուսոյ խաչի», էջ 930:

¹⁵ Նույն տեղում:

երեւեալ նշան՝ ամենայնիւ բառնիւ ներբողեալ եւ ծածկեցեալ փառացն յայտնաբան... »:

Ամփոփենք:

Նարեկյան դպրոցի ձևավորման և զարգացման ընթացքի վրա խոր ազդեցություն թողած նորպլատոնական սկզբնաղբյուրների մեջ առանձնանում և ընդգծվում են Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերը: Համեմատությունը վերհանում է Նարեկյան դպրոցի տեսական համակարգի՝ հատկապես գոյաբանության, էքստատիկ աստվածաբանության, բարոյագիտության և գեղագիտության կապն այդ աստվածաբանական երկերի հետ, որոնք ընդգծված գեղագիտական ուղղվածություն ունեն: Այդ զորեղ ազդեցությունն առկա է նաև արվեստի տեսության և բուն ստեղծագործության ոլորտներում, ուր դպրոցի ներկայացուցիչները զարգացնում են արեոպագիտյան գաղափարները:

Դիոնիսյան տեքստերը միատիկ-բանաստեղծներին և արվեստագետներին ազատ մտածողության և ստեղծագործության անսահմանափակ հնարավորություններ էին ընձեռնում, որի բացարձակ արտահայտություններից է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը:

Ստեղծագործող անհատն, ըստ այս տեսությունների, գտնվում է արարչագործության, մշտագեղուն հղացման ծիրում, ուր գերագույն նշանակություն է ստանում նրա ստեղծագործ տարերքը: Հիացումը, զարմանքը, սքանչացումը, սերը, հոգևոր տարփանքը նրա համար սոսկ հասկացություններ ու վերացական գաղափարներ չեն, այլ աստվածային ներգործուն սկիզբներ, կենդանի կապի, անմիջնորդ հաղորդակցության ձևեր: Նրանք շաղկապված են աստվածային արարման և ներդաշնակության գերագույն սկիզբներին՝ Բարուն, Ազնիվին, Գեղեցիկին, որոնցով ներթափանցված և ներդաշնակված է համաշխարհը:

Առկա փաստերի հիման վրա կարող ենք ասել, որ արեոպագիտյան բնագրերի ստեղծագործական յուրացման, խորքային ընկալման ու գեղագիտական-գեղարվեստական վերամարմնավորման այնպիսի երևույթ, ինչպիսին Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն է, չի հանդիպում ողջ հայ միջնադարում՝ և՛ խորքային, և՛ ծավալային իմաստով, քանի որ նրանցով ներթափանցված են Գրիգոր Նարեկացու բոլոր երկերը և հատկապես բանաստեղծական քերթվածները:

Արեոպագիտյան աստվածաբանության այս գաղափարները, որոնք, ինչպես նշեցինք, ընկած են միջնադարյան միատիկ ուղղությունների և Վերածննդի աստվածաբանության ու գեղագիտության հիմքում, առավել արտահայտված և բացահայտված են հեղինակի «Յաղագս աստուածայնոցն անուանց» և «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան» երկերում, ուր հստակ ուղի է

նշվում հատկապես արևելաքրիստոնեական միստիկայի բարոյագիտական-գեղագիտական ուղղության համար (կարծում ենք՝ այս ուղղության բարոյագործական անվանումը, գոնե հայ միջնադարում, լրիվ չի արտահայտում նրա կիրառման հոգևոր ոլորտները): Վերը նշված գաղափարներն ու սկզբունքներն են շեշտվում, ինչպես նշել ենք, նշված երկի «Զի՞նչ է աղավթից զաւրութիւն...», «Յաղագս բարույ, լուսոյ, ազնուի, տուփման, զարմացման...», «Յաղագս ազնուի», «Յաղագս զարմացման», «Յաղագս իմաստութեան, մտաց, բանի, ճշմարտութեան, հաւատոյ» և բազմաթիվ այլ գլուխներում:

Դիոնիսիոսը տարբերակում և ներհյուսում է իր «քրիստոնեացված նորալատոնականության» աստվածաբանական համակարգի բոլոր ուղղությունները՝ բաժանելով նրանց աղոթքի տեսության (որի մասն է օրհնաբանական աստվածաբանությունը), նշանական (խորհրդանշանային) աստվածաբանության, տուփողական (էքստատիկ) աստվածաբանության և վերջապես խորհրդական (խորհրդապաշտական) աստվածաբանության, որն իր մեջ ներառում է ճառելի (գրական, կատաֆատիկ) և անճառելի (ժխտողական, ապոֆատիկ) օրհնաբանության եղանակները:

«Մատեան»-ում, ինչպես նշել ենք, Գրիգոր Նարեկացին այս սկզբունքները հասցրել է գերագույն կառուցիկության և կոթողայնության: Բացարձակ առումով Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքը կապված է նորալատոնական-արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության հետ: Նա բացարձակացրել է նաև խոսքի աստվածային էության և զորության մասին պատկերացումները:

Գրիգոր Նարեկացու սրբազան տեսիլքների բացահայտումները «Մատեան»-ում ևս կապված են Դիոնիսիոսի հետ (տե՛ս Հեռոթեոսի՝ Աստվածամոր մարմնի հայեցողության և տեսիլային հափշտակության հաստիքը, որի մասին հիշատակել ենք):

Գրիգոր Նարեկացին զարգացրել է Դիոնիսիոս Արեոպագացու գեղագիտությունն իր ստեղծագործության ծիրում՝ վերածելով այն անվերջ ստեղծաբանության, արարման շրջապտույտ տարերքի, հոգևոր, բանական շարժման մի անվերջ հղացքի՝ անվերջ նորարարություն:

Գրիգոր Նարեկացին իր ստեղծագործության մեջ օգտագործել է արեոպագիտյան «պատկերագրության», պատկերընկալման այս խոր հղացքը՝ ներմուծված և զարգացած Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության ու ստեղծագործական փորձի մեջ, ուր նորալատոնական ակունքները ներհյուսված են վաղ քրիստոնեական միստիկ աստվածաբանությանը: Նա զարգացնում է այս գաղափարներն իր ստեղծագործության ծիրում՝ ելնելով աստվածային ներշնչանքով արարելու և «աստվածաշունչ» երկ ստեղծելու իր բացարձակ գաղափարից: Եվ պատկերներն այստեղ ուղղակիորեն կապվում են խոսքարվեստի, ինչպես բանաստեղծն է ասում՝ «խոսքի զորության արվեստի» հետ:

Խոսքն ավարտենք Գրիգոր Նարեկացու «Ո՛վ է Դա» («Հորի գրքի» մի գլուխն է) մեկնություն մի հատվածով, ուր ի հայտ են գալիս դիոնիսիոսյան օրհնաբանական աղոթքի տեսություն պատկերավոր բանաձևումները և հեղինակի բանաստեղծության նորարարական տարերքը:

Արդ, ո՛վ երանելի ժառանգք
 Եւ որդիք Վերին Երուսաղէմին,
 Եւ մանկունք լուսեղէն եւ պանծալի առագաստի,
Լուարո՛ւք զայս բան նորասացիկ եւ արհնութիւն նոր...
Եւ ընծայաբերական, եւ պտղաբերութիւն հոգեւոր շրթանց
 Եւ ծաղիկ աստուածային մերոց խորհրդոց...

Արդ, զայս նոր ոսկէճաճանչ պսակ եղեալ ի գլուխս ձեր՝
 Գոհացարուք զպսակողէն եւ եկայք ընդ մեզ,
Ձայնակցեալ փառաւորեսցուք զհիմնարկողն երկնի եւ երկրի...
Իբրեւ հրեղէն լարս՝
Չսուրբ զաւղալթս յերկինս առաբեսցուք¹⁶ ...

Իսկապէս, բանաստեղծի «հոգեւոր շուրթերը նորասացիկ խոսք և նոր օրհնաբանություն են պտղաբերում՝ իբրեւ հրեղէն լար սուրբ աղոթքներ երկինք առաքելով»:

Ամփոփենք. Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը խոր հետք են թողել հայ միջնադարյան մշակույթի զարգացման ընթացքի վրա: Մինչև այժմ նշվել են այն ընդհանրություններն ու ազդեցությունները, որոնք ի հայտ են գալիս դրանց և Դավիթ Անհաղթի, Ներսէս Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Վանական վարդապետի երկերում, ինչպէս նաև, Ստեփանոս Սյունեցուց հետո, այդ երկերի Համամ Արևելցու, Եսայի Նչեցու, Վահրամ Բաբունու լուծմունքներն ու մեկնությունները, որոնք շրջանառվել են հայ միջնադարյան դպրոցներում և վարդապետարաններում:

Այս ամենին գումարովում է, ահա, Նարեկյան դպրոցն իր մատենագրական մեծ ժառանգությամբ, որը X դ. հայ մատենագրության գերակշիռ մասն է կազմում:

Հավանաբար Նարեկյան դպրոցով, հատկապէս Անանիա Նարեկացիով և Գրիգոր Նարեկացիով միջնորդավորված, այդ խոր ազդեցությունն անցել է Կիլիկյան դպրոցին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Դիոնիսիոս Արեոպագացու երկերը զորեղ ազդեցություն են թողել, Ներսէս Շնորհալուց բացի, Գրիգոր Տղայի, Ներսէս Լամբրոնացու (XII դ.) տեսական հայացքների և բանաստեղծական

¹⁶ «Մատենագիրք հայոց», ԺԲ, էջ 508-509:

արվեստի վրա: Ակնհայտ է այդ ազդեցությունը նաև հայ միջնադարի խոշոր դեմքերից Հովհաննես Իմաստասերի (XI դ.) և Հովհաննես Երզնկացու (XIII դ.) վրա:

Ազդեցությունների և զարգացումների այս վերընթաց ուղին կարիք ունի նորովի և հանգամանալից ուսումնասիրության:

Այս խորհրդավոր բնագրերով ներթափանցված է ամբողջովին Գրիգոր Նարեկացու աղոթքի տեսությունը, տաղերգությունը, ներբողագրությունը և ողջ աստվածաբանական համակարգը:

Ընդհանուր առմամբ, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքն ամբողջությամբ իր հիմքում ունի Դիոնիսիոսի օրհնաբանական աստվածաբանությունը:

Նարեկացու բանաստեղծական հանճարը կայանում է նրանում, որ նա դիոնիսիոսյան բնագրերը մտցրել է արարման ծիրի, բանաստեղծական շրջապտույտի մեջ, վերածելով բանաստեղծությունը միջնաշխարհի, որ հոգևոր վերառաքման շղթայի կարևորագույն մի օղակն է:

Նա բանաստեղծությունը վերածում է անվերջ նորարարության, նորասացության, ստեղծելով մի բոլորովին նոր բառաշխարհ, Դիոնիսիոսի օրհնաբանական աստվածաբանությունը մտցնելով աստվածամերձ նոր ոլորտների մեջ:

Hrachya Tamrazyan **Dionysius the Areopagite and Grigor Narekatsi**

The writings ascribed to Dionysius the Areopagite have profoundly influenced medieval Armenian culture. Till now their relations with the works of David the Invincible, Nerses Shnorhali, Grigor Tatevatsi, Vankan Vardapet, as well as, following Stepanos Siunetsi, the commentaries on them by Hamam Areveltsi, Yesayi Nchetsi, and Vahram Rabuni, that circulated in medieval Armenian schools, have been mentioned.

Now the Narek school with its vast literary legacy (which forms the main bulk of the 10th c. literature) is added to them. Probably through the mediation of the Narek school, especially Anania and Grigor Narekatsi, this influence passed to the school of Cilicia.

Studies manifest the impact of Dionysius the Areopagite not only on Nerses Shnorhali, but also on the theoretical views and poetry of Grigor Tgha and Nerses of Lambron, (XII c.). It is evident in such eminent medieval personalities as Hovhannes Imastaser (the philosopher, XI c.) and Hovhannes Erznkatsi (XIII c.). This chain of influences and developments need new and detailed study.

These mystic texts thoroughly permeate Grigor Narekatsi's theory of

prayer, poetry, encomia, and his whole theological system. In general Grigor Narekatsi's poetic vision is based on the Dionysian theology. Narekatsi's poetic genius is manifested in introducing the Dionysian texts into poetic circulation, turning poetry into a sacred land which is the most important link of spiritual rise. He turns poetry into perpetual renewal and recreation, producing a thoroughly new world of words, introducing Dionysius' theology into new divine spheres.